Արագածոտնի Ն. Սիսակյանի անվան ավագ դպրոց

Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե	Արագածոտնի Ն. Սիսակյանի անվան ավագ դպրոց Սուքիասյան Մարինե
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	«Հինգերորդ դասարանի երաժշտության դասի պլանավորում»
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	• Սրբուհի Առաքելյան Սոկրատի • Երաժշտության ուսուցչուհի • 077-05-72-70 • Srbuhiaraq1234@gmail.com • Երաժշտություն • 1-7-րդ դասարաններ
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	• Արագածոտնի մ., գ. Ավան, Ա. Սերոբի անվան միջնակարգ դպրոց • 093-15-75-14

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3
Երաժշտության դասի պլանավորումը հինգերորդ դասարանում.....5
Կատարված փորձարարական աշխատանքների արդյունքների ամփոփում.....12
Դասի պլան 1.....14
Դասի պլան 2.....17
Եզրակացություն.....21
Օգտագործված գրականության ցանկ.....22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նպատակը և հետազոտական հարցը	• Ուսումնասիրել երաժշտության ուսուցման գործընթացում դասի պլանավորման կարևորությունը, դասարանի աշակերտների մշակութային կարողունակության ձևավորմանը նպաստող աշխատանքների ձևերն ու հնարները՝ առավել արդյունավետ ուսուցման համար: • Արդյո՞ք կարևոր է դասի պլանավորումը:
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը	Հինգերորդ դասարան, 14 աշակերտ:

Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Հաշվի առնելով հետազոտության թեմայի յուրահատկությունը՝ մենք նպատակահարմար ենք գտնում կիրառել հետազոտության փաստաթղթերի վերլուծության և՛ ավանդական, և՛ բովանդակային մեթոդները: Վերլուծության առարկա են հանդիսանում մերի կողմից առանձնացված գրական նյութերը, համացանցից բերված օրինակները, դասի պլանավորման մասին պատմող տեսանյութերը, ինչպես նաև ԿՁՆԱԿ-ում տեղադրված նյութերը, հաշվետվությունները:
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	սեպտեմբեր- հոկտեմբեր

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ

Դասը սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծմանհամար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների հաստատուն կազմի և սովորողների գործունեության կազմակերպման ձև: Այն կազմակերպվում է բոլորի համար միասնական կրթական ծրագրով:[1]Յուրաքանչյուր դաս սկսվում է վերջնական նպատակի գիտակցումով և դրա ճշգրիտ, կոնկրետ սահմանումով, այնուհետև նպատակին հասնելու միջոցների հաստատմամբ և վերջապես նպատակին հասնելու մեթոդների սահմանմամբ, ինչպես նաև պլանավորմամբ:

5–րդ դասարանի երաժշտության ուսուցիչն իր աշխատանքը կազմակերպում է այնպես, որ տարբեր երաժշտական զարգացում ունեցող աշակերտների համար երաժշտության դասը լինի հետաքրքիր, միաժամանակ՝ արդյունավետ:
Տարբեր մանկավարժներ տարբեր կերպ են տեսակավորել դասերը՝ ելնելով դասի ընթացքում կիրառվող մեթոդներից, դասի կազմակերպման ձևերից, կախված դասի բովանդակությունից և անցկացման եղանակից, ուսուցման նպատակից, ուսուցման գործընթացի հիմնական փուլերից և այլն:

Արդի մանկավարժությունը ընդհանրացնելով այդ տեսակավորումը՝ ներկայացնում է դասերի հետևյալ տիպերը՝

- նոր նյութի հաղորդման դասեր
- կարողությունների ու հմտությունների ձևավորման և ամրապնդման դասեր
- գիտելիքների ու կարողությունների ստուգման և շտկման դասեր
- համակցված դասեր[2]

Կան նաև դասի ոչ ավանդական ձևեր, որոնցով դասի պլանավորումն ու անցկացումը կրտսեր դասարաններում ավելի դյուրին է դարձնում դասի հաղորդումը և ավելի հասանելի՝ բովանդակությունը, աշակերտների համար երաժշտության դասաժամերի ընթացքում:

Դրանք են՝

- Դերային խաղեր

---

[1]Այվազյան Հ., Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում, Երևան, 2014, էջ 2

[2]Համացանց, Վիկիպեդիան, https://hy.wikipedia.org/wiki/%D4%B4%D5%A1%D5%BD

- Դաս-ներկայացում
- Հեքիաթային դիպաշարի կատարում
- Ստուգատես
- Մտապատկերների դաս
- Դաս-խաղ
- Դաս-Էվրիկա
- Դաս-բանավեճ
- Միջառարկայական ինտեգրված դաս և այլն:

5–րդ դասարանում երաժշտական դաստիարակությունը ունի իր նպատակները և խնդիրները: Նպատակներն են.

- երեխաներին դաստիարակել որպես հոգևոր և բարոյական բարձր արժանիքներով օժտված Մարդիկ,
- հայ երեխաների երաժշտական դաստիարակության հիմքում դնել ազգային երաժշտությունը՝ չանտեսելով նաև այլ ժողովուրդների ազգային և համաշխարհային դասական կոմպոզիտորների ստեղծած երաժշտությունը,
- զարգացնել սովորողների ստեղծագործական երևակայությունը, նպաստել ինքնաճանաչմանը և ինքնաարտահայտմանը,
- սովորողներին տեսանելի դարձնել երաժշտության և կյանքի միջև առկա կապերը:

Խնդիրներն են.

✔ շարունակել արվեստների գեղեցկությունը զգալու և ընկալելու կա րողության ձևավորումն ու զարգացումը:
✔ կատարել երաժշտության և արվեստի մյուս տեսակների փոխհա րաբերության և փոխազդեցության վերլուծություն,
✔ աշակերտների մեջ ձևավորել արվեստի տեսակների արտահայտ չականության տարբերությունները զգալու կարողություն,
✔ ցույց տալ, որ արվեստի տեսակները կյանքի ճանաչողության և հոգևոր աշխարհի վերափոխման միջոցներ են,
✔ ձևավորել լսողական և տեսողական տպավորությունները իմաս տավորելու և արտահայտելուկարողություն,
✔ զարգացնել երաժշտական ստեղծագործությունները լսելու և ինք նուրույն մեկնաբանելու կարողություն,

- ✔ խորացնել ճանաչողական գործունեությունը, զարգացնել տրամաբա նական, հաղորդակցական, համագործակցային կարողությունները,
- ✔ շարունակել երաժշտալսողական պատկերացումների, նոտաներով և ձեռքի նշաններով երգելու կարողության, անհատական և խմբական երգեցողության հմտությունների զարգացումը,
- ✔ զարգացնել սովորողների ստեղծագործական կարողությունները: Հիշյալ խնդիրների իրականացման հիմքում երաժշտության ակտիվ ընկալումն է սովորողների կողմից, նրանց բազմատեսակ երաժշտական գործունեությունը:[3]

Ուսումնառության ընթացքում առաջացած և ուսումնական գործընթացի նպատակային առաջընթացն ապահովող տարրերի տարաբնույթ փոխազդեցությունների հանրագումարը կոչվում է դասի կառուցվածք: Ըստ կառուցվածքի դասերը լինում են՝

1. Նոր նյութի յուրացման դաս
2. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ամրապնդման և զարգացման դաս
3. Կարողությունների և հմտությունների ձևավորման դաս
4. Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառման դաս
5. Կրկնողության դաս
6. կրկնողական-ընդհանրացնող դաս
7. ստուգողական կամ սխալների ուղղման դաս
8. Համակցված դաս[4]

Շատ կարևոր է դասի պլանավորումը, յուրաքանչյուր դասաժամի ճիշտ, գրագետ, գծագրված պլանավորման արդյունքում պարապուրդի չի մատնվի ոչ մի աշակերտ, ուսուցանվող նյութը ճիշտ ձևով և չափով ընկալելի կդառնա յուրաքանչյուրի համար, չի կարելի կորցնել դասից անգամ մեկ րոպե, չէ որ հենց այդ րոպեների ընթացքում է միայն, որ մենք կարող ենք ճիշտ կրթել և դաստիարակել մեր աշակերտներին՝ մոտեցնել մշակույթին, տալ ազգայինը, սովորեցնել սիրել մեր երգն ու պարը, գիրն ու գրականությունը և ամենակարևորը հայրենիքը:

---

[3]Ցուզբաշյան Ցու. Վ., Փահլեվանյան Ա. Ա., Ավետիսյան Վ. Ի., Երաժշտություն, 3-րդ դասարան, Մեթոդական ուղեցույց, Երևան, Զանգակ հրտ., 2023, էջ 3-4

[4]Այվազյան ., Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում, Երևան, 2014, էջ 3

Առհասարակ ցածր դասարաններում որպես դասավանդման մեթոդ ընտրում ենք առավել պարզ ձևերը, որոնք կխթանեն երեխաների նյութի ընկալման գործընթացը: անհրաժեշտ է մատնանշելուսուցանվող նյութի առավել կարևոր հատվածները, ձևավորել հիշելու և հիշողությունում երկարատև պահպանելու մոտիվացիա, կրկնողությունների միջոցով կատարել նյութի նախնական ամրապնդում,կատարել պարբերական համակարգված կրկնողություններ՝ սկզբում կարճ ժամանակահատվածներում, ապա ավելի երկար ժամանակահատվածում, համադրելով վերարտադրության նկատմամբ տարաբնույթ պահանջների հետ:

Կան դասի կառուցվածքային մի քանի փուլեր.

1.Կազմակերպչական

- Կազմակերպչական մասի կարճ ժամանակահատվածը, դասարանի լրիվ պատրաստվածությունը աշխատանքին, աշակերտների արագ ներգրավվումը աշխատանքային ռիթմի մեջ, բոլոր աշակերտների ուշադրության կազմակերպում:

2. Տնային առաջադրանքի բազմակողմանի ստուգում

- Սահմանել տնային աշխատանքի կատարման ճշտությունը և ըմբռնումը բոլոր աշակերտների կողմից,զարգացնելով ԳԿՀ-ն, ստուգման միջոցով բացահայտել բացթողումները: Ուսուցչի արդյունա-վետությունը, նրա գործունեության նպատակաուղղվածությունը, դասարանի հնարավորինս բոլոր աշակերտների տնային աշխատանքներն ստուգելու համակարգված հնարքների կիրառում ուսուցչի հնարավորությունները կարճ ժամանակահատվածում (5-7 րոպե) բացահայտել աշակերտների մեծամասնության գիտելիքների աստիճանը:

3. Գիտելիքների կարողությունների և հմտությունների բազմակողմանի ստուգում

- Խորը և բազմակողմանի ստուգել աշակերտների գիտելիքները, գիտելիքների և կարողությունների հայտնաբերված բացթողումների պատճառների բացահայտում, խթանել հարցվածների և ամբողջ դասարանի ինքնակրթության և ուսումնառության խելամիտ մեթոդների տիրապետումը

4. Նոր նյութի ակտիվ և ըմբռնումով յուրացնելուն միտված նախապատրաստություն

- Կազմակերպել և նպատակին հասցնել աշակերտների ճանաչողական գործունեությունը: Ուսուցանվող նոր նյութի թեմայի, խնդիրների և նպատակի

հաղորդում, դրա գործնական կիրառության ցուցադրություն, կրթական խնդրի առաջադրում:

5. Նոր գիտելիքների յուրացում

Սովորողներին տալ կոնկրետ պատկերացում ուսումնասիրվող փաստերի, հիմնական գաղափարների վերաբերյալ, ինչպես նաև կանոնները, օրենքները և համոզմունքները: Հասնել նրան, որ աշակերտները պատկերացնեն, գիտակցեն, նախնական ընդհանրացնեն և համակարգեն նոր գիտելիքները, յուրացնեն մեթոդները, ճանապարհները և միջոցները, որոնք հանգեցնում են տվյալ ընդհանրացմանը: Յուրացված նյութի հիման վրա ձևավորել համապատասխան գիտելիքներ, հմտություններ և կարողություններ:

6. Նոր նյութի ըմբռնման ստուգում:

Պարզել, հասկացել են արդյո՞ք աշակերտները փաստերի միջև եղած կապերը, նոր հասկացությունների իմաստը, օրինաչափությունները: Շտկել բացահայտված բացթողումները:

7. Նոր նյութի ամրապնդում

Ապահովել սովորողներին գիտելիքներ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են տվյալ նյութի հետ ինքնուրույն աշխատանքի համար:

8. Տնային առաջադրանքի հանձնարարում, իրականացման մեկնաբանում

Սովորողներին ներկայացնել տնային առաջադրանքը, բացատրել կատարման մեթոդները:

9. Դասի ամփոփում

10. Վերլուծել, գնահատել հաջողվածությունը և նպատակների կատարումը, պլանավորել առաջընթացը: [5]

Այս ամենի հետ մեկտեղ բնականաբար առկա են նաև դասի նկատմամբ պահանջներ, դասին ներկայցվող հիգիենիկ պահանջներ, դասի վարման տեխնիկային վերաբերող պահանջներ, որոնց ամբողջական կիրառման դեպքում միայն կհասնենք ցանկալի արդյունքի:

Գոյություն ունեն դասավանդման մեթոդների բազմաթիվ դասակարգումներ: Այն մեթոդները, որոնք հիմնված են ուսումնառության գործընթացում

[5]Այվազյան Հ., Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում, Երևան, 2014, էջ 14

աշակերտների դերի վրա, բաժանվում են 3 խմբի՝ պասիվ, ակտիվ և փոխներգործուն: [6]

5–րդ դասարանցիները պետք է կարողանան երգել ազատ, թեթև, հնչեղ ձայնով, տարբերել ճիշտ շնչառությամբ երգելու ձևերը, օգտվել ձայ նի փափուկ և կոշտ գրոհով երգելու հնարից: Պետք է զարգացնել ճիշտ շնչառությամբ, երկարաձիգ երգելու հմտությունը, արտաշնչումը, երգի աստիճանական մեղմացման և ուժեղացման դինամիկ երանգները: Երեխային պետք ծանոթացնել լեգատո, ստակատո կատարողական հնար ներին և սովորեցնել երգի բառերն արտաբերել պարզ, հստակ, լսելի ու հասկանալի:[7]

Երաժշտության դասին բազմատեսակ երաժշտական գործունեությունը նպաստում է.

- սովորողների բազմաբնույթ մտածողության զարգացմանը,
- համագործակցային ուսուցման արդյունավետության բարձրացմանը,
- ստեղծագործական մտածողության ու երևակայության զարգացմանը,
- աշակերտների բնածին ընդունակությունների ձևավորմանն ու զարգացմանը,
- միջանձնային շփմանը, հաղորդակցման ձևերի յուրացմանը, ուրիշի կարծիքի նկատմամբ հարգալից վերաբերմունքի մշակմանը, մտքերի փոխանակման և բանավիճելու կարողությունների զարգացմանը (խմբային համագործակցված աշխատանք),
- աշակերտների ներքին հնարավորությունների և մտավոր կարողությունների բացահայտմանը և զարգացմանը,
- միջառարկայական կապերի հաստատմանը:[8]

Ամեն ժամանակաշրջան առաջ է քաշում ուսուցման և դաստիարակության իր պահանջները, մշակվում են նոր մոտեցումներ: Կրթությունը միշտ դիտվել է որպես մարդու զարգացումն ապահովող հիմնաքար: Պատահական չէ այն կարծիքը, որ

---

[6]Պաշարեների ստեմարան, https://lib.armedu.am/files/resource/files/2022-09-29/b4cdd2f6e89b2343f17b897bc9cbf23e.pdf

[7]Ցուզբաշյան Ցու. Վ., Փահլեվանյան Ա. Ա., Ավետիսյան Վ. Ի., Երաժշտություն, 5–րդ դասարան, Մեթոդական ուղեցույց, Երևան, Զանգակ հրտ., 2023, էջ 9

[8]Ցուզբաշյան Ցու. Վ., Փահլեվանյան Ա. Ա., Ավետիսյան Վ. Ի., Երաժշտություն, 5–րդ դասարան, Մեթոդական ուղեցույց, Երևան, Զանգակ հրտ., 2023, էջ 26

կրթությունը շարժվում էզարգացման առջևից, վերջինս էլ ապահովում է կրթության և դաստիարակության առաջընթացը:

Կատարված փորձարարական աշխատանքների արդյունքների ամփոփում

2022-2023 ուսումնական տարում փորձարարական աշխատանքներ իրականացրեցինք Արագածոտնի մարզի Ավան գյուղի Ա. Սերոբի անվան միջն. դպրոցի 5-րդ դասարանում: 5-րդ դասարանում կա 12 աշակերտ: Փորձարարական աշխատանքը կատարելու նախապատրաստական փուլում զրույց ունեցանք դպրոցի
ղեկավարության և դասվարների հետ: Նշեցինք հետազոտության նպատակը, խնդիրները, բացատրեցինք հետազոտական աշխատանքի ընդհանուր բովանդակությունը:

Հետազոտության իրականացման նպատակով մի քանի դաս անցկացրել եմ առանց դասի պլանի, մի քանիսն էլ եղել են պլանավորված: Կցանկանայի նշել, որ կարևոր է հստակեցնել , թե ինչ ենք ցանկանում, որ աշակերտը տվյալ թեմայից սովորի, որոնք են այն հիմնական հասկացություններն ու գաղափարները, որ ցանկանում ենք ուսուցանել և ի վերջո, ինչպիսի՞ վերջնարդյունքներ ենք ակնկալում: Ի՞նչ ենք ցանկանում մատուցել, ի՞նչ ուղիով և միջոցներով:

Այսպիսով դասի պլանավորումը համակարգում է դասապրոցեսը և դարձնում առավել արդյունավետ: Յուրաքանչյուր դասի պլանավորում ենթադրում է ստեղծագործական լուրջ աշխատանք, որի արդյունքում մենք գտնում և մշակում ենք այն ձևերն ու հնարները, որոնք ուղղված են դասի նպատակների իրականացմանը և ցանկալի վերջնարդյունքներին:

Հետազոտության ընթացքում դասապրոցեները իրականացրել եմ և՛ նախօրոք կազմված դասապլանների համաձայն, և՛ առանց դասի պլանավորման:

Դասապրոցեսի բոլոր փուլերի համար էլ գոյություն ունեցող մեթոդական վարժությունները բազմազան ու բազմաթիվ են: Ընտրությունը մերն է, կան մեթոդներ որոնք նպատակահարմար չէ օգտագործել երաժշտության դասի

համար, քանի որ չեն համապատասխանում առարկային, դասի տիպին, նպատակներին և կառուցվածքին:

Կարևոր է նշել, որ հանգեցինք հետազոտության ցանկալի արդյունքի, ըստ որի առանց դասի պլանավորման դասարան մտնելը քիչ արդյունավետ է նպատակային և կենտրոնացված դաս վարելու համար: Պլանավորված, ճիշտ մշակված դասի արդյունքում աշակերտները հեշտությամբ կարողանում են համադրել իրենց գիտելիքները և դրանք ծառայեցնել մեկը մյուսին:

Ստորև ներկայացրել եմ պլանավորված դասի երկու օրինակ.

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԻ ՊԼԱՆ 1

Ամսաթիվ՝ 17.09.2023

Ուսուցչի ազգանուն, անուն– Առաքելյան Սրբուհի

Առարկա– Երաժշտություն

Դասարան – 5

Դասի թեման– Ռոմանոս Մելիքյան

Ռոմանոս Մելիքյանի կյանքն ու ստեղծագործական գործունեությունը, ունկնդրել և ուսուցանել Ռ. Մելիքյանի «Վարդը» ռոմանսը:

	Դասի նպատակը	Կարևոր դրույթները	Անհրաժեշտ նյութերը
Դասի տեսլական	• Ծանոթացում Ռ. Մելիքյանի ստեղծագործությանը, կոմպոզիտորական երգերին: • Ունկնդրել, վերլուծել, մեկնաբանել երաժշտության և գրականության կապը: • Ծանոթացնել Ռ. Մելիքյանի երաժշտական արվեստին, կյանքին և մշակութային գործունեությանը:	Ձևավորել հմտություններ Ռ. Մելիքյանի երգերի տեսակները և նրանց առանձնահատկություններն իմանալու, ճանաչելու և տարբերելու համար: Զարգացնել ազգային երաժշտությունը և գրականությունը սիրելու և հասկանալու կարողությունը:	Դասագիրք, պրոյեկտոր, Համակարգիչ, տեսագրություն Ռ. Մելիքյանի մասին, «Վարդը» երգի ձայնագրությունը՝ https://www.youtube.com/watch?v=8nP4wQFw5-c

Դասի ընթացքը, մեթոդները	Գնահատում
	Միավորային Ձևավորող Վերջնարդյունք ● Աշակերտը կծանոթանա Ռ. Մելիքյանի երգերին և նրա թողած մշակութային ժառանգությանը: ● Կհայտնի կարծիք նրա երգերի մասին: ● Կերգի «Վարդը»երգը:
	Դասի սկիզբ ՝ խթանում Ներկայացնում ենք նոր նյութը, երեխաները կարդում են տեղեկություններ Ռ. Մելիքյանի կենսագրությունը, հարց ու պատասխանի միջոցով ներկայացնում ենք նրա դերը հայ երգի, մշակույթի զարգացման գործում, ֆիքսում ենք այդ ամենի կարևորությունը:
	Նոր նյութի ներկայացում Կարդում ենք կենսագրության մասին հոլովակը, լսում «Վարդը» ռոմանսը
	Ուղղորդված-գործնական աշխատանք Շրջանի մեջ գրում ենք «Վարդ» բառը, իսկ երեխաները դրա շուրջ լրացնում են ստեղծագործությանը նկարագրող բառեր, այդպես ևս մեկ անգամ վերհիշում ենք տեսածն ու լսածը և ամրապնդում:
	Ինքնուրույն աշխատանք\ իմաստավորում Այս փուլում երեխաներին հանձնարարում եմ գրել հինգ տողանոց շարադրանք՝ «Ինչ կհարցնեի Ռ. Մելիքյանին , եթե հանդիպեի...» :
	Դասի ավարտ

	Հարցերի միջոցով ամփոփում ենք անցած նյութը: Հանձնարարում տնային առաջադրանք.Փորձե՛ք հորինել փոքրիկ երգ ձեր սիրած ծաղկի վերաբերյալ:	

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԻ ՊԼԱՆ 2

Ամսաթիվ՝15.09.2023

Ուսուցչի ազգանուն, անուն– Առաքելյան Սրբուհի

Առարկա– Երաժշտություն

Դասարան – 5

Դասի թեման– «Երաժշտությունը և գրականությունը»

Դասի Տեսլակ անը	Դասի նպատակը	Կարևոր դրույթները Ի՞նչ գիտելիքներ և հմտություններ են մտնում դասի նպատակի մեջ:	Անհրաժեշտ նյութերը Ի՞նչ է անհրաժեշտ դասի համար–դիդակտիկ պարագաներ:
	«Երաժշտությունը և գրականությունը» թեմայի շրջանակում զարգացնել սովորողների ստեղծագործական մտածողությունը և երևակայությունը:	✔ իմանալ երաժշտություն և գրականություն արվեստների առանձնահատկությունները, նմանությունները ✔ ծանոթանալ Կոմիտասի և Մենդելսոնի ստեղծագործական գործունեությանընտարբերությունները,	դասագիրք, մեթոդական ուղեցույց, ձայնագրություններ՝ CD,տեսալսողական սարքեր
	Գնահատում		
	Հայտորոշիչ Ձևավորող		
	Դասի սկիզբ Խթանման փուլ		

Դասի ընթացքը, մեթոդները

	Խթանման փուլում պարզաբանվում են արվեստների փոխկապակցվածությունը և փոխազդեցությունը: Սովորողները ծանոթանում են «արվեստ» հասկացությանը, արվեստի տեսակներին, ապա ներկայացվում է «Երաժշտությունը և գրականությունը» թեման: Նոր նյութի ներկայացում՝ ստեղծագործական մտածողության զարգացման ուղղվածությամբ:	✔ Աշակերտները արվեստի մասին իմացածը գրում են գրատախտակին՝ «արվեստ» բառի շուրջը: ✔ Ունկնդրել «Կաֆավի երգը» լարային քառյակի կատարմամբ և «Վենետիկի գոնդոլավարի երգ» մանրանվագը, երաժշտ.՝ Ֆելիքս Մենդելսոնի:	Կիրառվում է «Մտագրոհ»
	Նոր նյութի ներկայացում Իմաստի ընկալման փուլ		

	✔ Ուսուցանվում է «Կաֆավի երգը» ✔ Ուղղորդում ենք աշակերտներին հասկանալու նմանություններն ու տարբերությունները՝ բերելով օրինակներ և թույլ ենք տալիս աշակերտներին ինքնուրույն մտածել ու կռահատել. Օրինակ՝.նմանությունը՝ երկուսն էլ արվեստի տեսակ են, տարբերությունը՝ մեկը խոսքային արվեստ է, մյուսը՝ հնչյունային: Երկուսի համար ընդհանուր են ռիթմը, հնչերանգը: Այն, ինչ ընդհանուր է, գրվում է երկու շրջանագծերի հատման մասում:	✔ Ունկնդրել «Կաֆավի երգը» լարային քառյակի կատարմամբ և «Վենետիկի գոնդոլավարի երգ» մանրանվագը, երաժշտ.՝ Ֆելիքս Մենդելսոնի: ✔ «Վենի դիագրամ»-ում լրացնում են երաժշտության և գրականության տարբերություններնու ընդհանրությունները, որոնք դառնում են տեսանելի աշակերտների համար:	Զայնագրություններ «Վենի դիագրամ» 
	Ուղղորդված աշխատանք Կռահատման փուլ		
	Ուսուցչի գործողությունները	Աշակերտների գործողությունները	Նյութերը/ Ուսուցչի դերը
	Հարցերով ամփոփում ենք ունկնդրած երաժշտության մասին կարծիքները, մտքերը:	✔ Պատմում են իրենց տպավորությունների մասին: ✔ Դասարանի աշակերտներից մեկը երգում է քառատողերը, իսկ դասարանցիները երգում են կրկներգը՝ երկտողը:	«Զրույց», «Հարց ու պատասխան»մեթոդները, որոնք հնարավորություն են տալիս աշակերտին ազատ, անկաշկանդ, ինքնուրույն արտահայտելու մտքերը:

	Տնային աշխատանք Տետրի մեջ գրել, թե երաժշտության և գրականության փոխկապվածությունից և փոխազդեցությունից ի՞նչ ժանրեր են առաջանում: Այդ ժանրերից ո՞րն է քեզ համար սիրելի, ովքե՞ր են քո նախընտրած ժանրի ամենասիրելի ստեղծագործության տեքստի և երաժշտության հեղինակները:
	Վերջնարդյունք
	✔ Դպրոցականները իմանում են, որ արվեստի տվյալ տեսակներն իրար հարազատ են ✔ Առանց գրականության չէին լինի այնպիսի երաժշտական ժանրեր, ինչպիսիք են երգը, ռոմանսը, օպերան, կանտատը և երգչային այլ ստեղծագործություններ ✔ Երեխաները գիտակցում են, որ երաժշտության և գրականության միասնությունից շահում է ոչ միայն երաժշտությունը, այլ նաև գրականությունը ✔ Հասնում ենք նրան, որ աշակերտը երաժշտությունը ոչ միայն ականջներով լսի և հուզական արձագանք տա, այլ նաև «տեսնի աչքերով»: ✔ Աշակերտը ծանոթանում է «Կաֆավի երգը» լարային քառյակի կատարմամբ և «Վենետիկի գոնդոլավարի երգ» մանրանվագը, երաժշտ.՝ Ֆելիքս Մենդելսոնի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից սերնդի հոգևոր պահանջմունքների հարցը դարձել է ելակետային նախադրյալ: Քսանմեկերորդ դարի սերունդը, որի ճաշակն ու իմացությունները կրթվում են բազմապիսի հաղորդումներով, կապի նորագույն միջոցներով, հարուստ տեղեկատվությամբ և համակարգչային հմտություններով: Նրանց հոգեբանության վրա վիթխարի ներազդող դեր ունի ժամանակակից կյանքը, որը սկիզբ է առնում ընտանիքում և շարունակվում հանրային տարատեսակ հարաբերությունների մեջ: Ժամանակակից սերունդը հայտնվել է և՛ ազգային, և՛ համաշխարհային մտավոր տեղաշարժերի ոլորտում: Նրա ճաշակը ձևավորվում է բազմակողմանի կուտակումներով: Բազմադարյա հայ երաժշտությունն իր զտված հարստությամբ սերնդին պետք է հաղորդի ոչ միայն երաժշտական ինչ-որ նյութ, այլև նրան տա ճաշակ, ապրելու հմտություն,

ազգային գրականության մեջ համամարդկային բարձր արժեքները արժևորելու հնարավորություն:

Այսպիսով, իմ հետազոտական աշխատանքի արդյունքում հանգեցի այնեզրակացության, որ երաժշտության ուսուցման գործընթացում դասի ճիշտ և գրագետ պլանավորումը նպաստում է աշակերտների ուսումնական գործունեությանը, ձևավորում և զարգացնում է ազգային մտածողությունը և նպաստում սովորողների մշակութայինկարողունակության ձևավորմանը:

Երաժշտությունը համարվում է ազգային մշակույթի, պատմության մի մասը, որիուսումնասիրումը թույլ է տալիս բացահայտել ազգային դիմագծերը, արժեքայինհամակարգը, ազգային առանձնահատկությունները: Ուսումնասիրելով ազգային երգն ու պարը՝ սովորողները ծանոթանում են նաև տաղավար տոներին,որոշակի գիտելիքներ են ունենում քրիստոնեական արժեքների մասին:

Ի վերջո, բազմաբնույթ մտածողության կիրառման մեթոդով աշխատող ուսուցիչը ոչ միայն ուսուցանում և դաստիարակում է, այլ նաև ակտիվացնում ու խթանում է սովորողների ինքնազարգացման ձգտումը՝ սովորեցնում է սովորել:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Այվազյան Հ., Դասի կառուցվածքային տարրերի կիրառումը հանրակրթական առարկաների օրվա պլանների կազմման գործընթացում, Երևան, 2014
2. Յուզբաշյան Յ., Փահլեվանյան Ա., Ավետիսյան Վ., Ավանեսով Ա., Երաժշտություն 5, Երևան, Զանգակ հրտ., 2020
3. Յուզբաշյան Յու. Վ., Փահլեվանյան Ա. Ա., Ավետիսյան Վ. Ի., Երաժշտություն, 5-րդ դասարան, Մեթոդական ուղեցույց, Երևան, Զանգակ հրտ., 2023

4. Համացանց, Վիկիդարան,
https://hy.wikipedia.org/wiki/%D4%B4%D5%A1%D5%BD
5. Պաշարների շտեմարան,
https://lib.armedu.am/files/resource/files/2022-09-29/b4cdd2f6e89b2343f17b897bc9cbf23e.pdf